

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ

ՄԵԼԻ

Տարեկան գինը 10 բուրձի կէս տարվանը 6 բուրձի
Առանձին համարները 5 կոպէկով
Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ
Մեր հասցեն. Тифлисъ, редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)
Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լիզուով
Յայտարարութիւնների համար վճարում են
խորաբանչիւր տողատեղին 10 կոպէկ
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԻՐԻՎՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Բարեկից Գրքերահան՝ իր Ստեփան, Յովհաննէս, Մկրտիչ և Մարիամ որդեկրտու-
ցով և իր փեսայ Յակոբ Գաբրիէլեան յայտնում են ըստ յարգելի բարեկամներին ի-
րանց անսովորական վիշտը, յանձին

ՍԻՍԷՕՆ Յ. ՔԻԼԻՔՃԵԱՆԻ

որի վշտալի մահը տեղի ունեցաւ ամսին 20-ին, Հոգեհանգիստը կը կատարվի ուր-
բաթ, երեկոյեան ժամի 7-ին, իր բնակարանում, Նիկողայիսկայեան փողոց № 79, Սա-
ֆարովի տուն: Յուզարկաւորութիւնը ամսին 23-ին, շաբաթ օրը, առաւօտեան ժամը
10-ին դէպի Կուկիայի կաթօրկներէն եկեղեցին: Թաղումը Կուկիայի գերեզմանատանը:
2—2

ԲՈՎԱՆԴԱՅՈՒԹԻՒՆ

Փաղաքական տեսութիւն. Ներքին ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Ժամանակակից հարցեր. Պիտի աջակ-
ցներ. Թատրոն և երաժշտութիւն. Նամակ Մեղ-
րից. Նամակ Գանձակից. Ներքին լուրեր. —
ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջ.
Արաբքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱ-
ՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՓԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Հեռուոր Արեւելքում վերջին ժամա-
նակներս տեղի չունեն աչքի ընկնող ե-
ղիւթներ: Յամարում ուսանական և
հապոնական զօրքերը բաւականանում են
մանր մունը ընդհարումներով. իսկ իրա-
պէս ուժեղացնում են իրանց բանակնե-
րը, որպէս զի կարող լինեն լուրջ արշա-
ւանքներ առաջ մղել:

Մովի վրա շարունակվում է մի անո-
րոշ դրութիւն, որովհետեւ հակառակ նա-
ւատումները դեռ չփոխներ չունեն մի-
մեկից հետ: Ռուսական երկրորդ նաւա-
տորմը Նեքստաովի հրամանատարու-
թեամբ, որ շտապում է գնալ և միանալ
Բոֆուտինսկու նաւատորմին, արդէն
անցել է Սինդապուրի մոտով և հաւա-
նական է, որ շատ շուտով երկու նաւա-
տորմերը սերտ յարաբերութիւններ մէջ
կը մտնեն միմեկից հետ և կը կազմեն
ընդհանուր գործողութիւնների պլաններ
իրանց համար:

Շատ հետաքրքրական մի հարց է ներ-
կայումս այն, թէ որտեղ է գտնվում
հապոնական զինուորը նաւատորմը և թէ
ինչ ծրագրի է հետևում ծովային Տօգօ,
որ վաղուց պատրաստվում է ծովային
պատերազմ տալու ռուսական նաւա-
տորմին: Մի քանիսը կարծում են, որ
Տօգօն գտնվում է Ֆորմոզա կղզու շրջա-
կայքով, միւսները կարծում են, որ նա
հապոնական կղզիների մօտն է: Առաջ
ենթադրում էին, որ Տօգօն պէտք է
շտապի յարձակվելու ռուսական նաւա-
տորմի վրա և կարծիք էին յայտնում, որ
Տօգօն նոյն իսկ յարձակումներ կը գործէ
Սինդապուրի շրջակայքում: Բայց փաս-
տերը ցոյց են տալիս, որ Տօգօն ամենե-
ւին մտադիր չէ չափազանց հեռու լինե-
լու հապոնական յենակէտից և վճռել է
սպասել ռուսական նաւատորմի մօտենա-
լուն դէպի հապոնական ջրերը: Յամե-
նայն դէպս Տօգօի նաւատորմի ուր լինե-
լու մասին եղած գաղտնիքները որոշ
տպաւորութիւն են գործում քաղաքական
մամուլի վրա:

Ամերիկայում շատ լուրջ կերպով հե-
տաքրքրված են խաղաղութիւն կայացնե-
լու խնդրով և նախագահ Բուզկլետ ա-
ռանձին ուշադրութեամբ հետևում է Հե-
ռաւոր Արեւելքի դէպքերին, որոնցով
յարմար առիթ միջոցով պաշտօն ստան-
ձնելու Ռուսաստանի և Նապոլիոնի մի-
ջև համաձայնութիւն կայացնելու հաշ-
տութեան պայմանների վերաբերութեամբ:
Սակայն քաղաքական մամուլի ընդհանուր
կարծիքն այն է, որ քանի ծովային պա-
տերազմական լուրջ ընդհարումներ տեղի
չեն ունեցել, հազիւ թէ խօսք կարելի լի-
նի բանալ հաշտութեան մասին: Եւ առ-

հասարակ այժմ խաղաղութեան վերաբե-
րութեամբ աւելի քիչ է խօսվում, քան
երկու ամիս սրանից առաջ Մուկլէնի
անցքերի անմիջական տպաւորութեան
տակ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՃԱՄԱՆԱԿԱՆ ԶԱՐԳՆԵՐ

I

Շատ չէ անցել այն օրից, երբ մի երկաթե-
ծէն խեղդում էր ամեն մի փոքր է շատ
ազատ քայլ Կովկասում, երբ ստիպում էին լուի
ամենահասարակ ճշմարտութիւնները ասելու ժա-
մանակ, երբ մարդ հարկադրված էր ամենա-
սոսկալի անարդարութիւններ և նոյն իսկ յա-
փշտակութիւններ տեսնել և չը վստահանալ
բողոք բարձրացնելու:

Սակայն Ռուսաստանի վրայով անցաւ մի
կենդանաբար հողմ, մարդկային միտքը ա-
զատվեց կաշկանդումներից, բռնադատված
խօսքը մի փոքր ազատութիւն գտաւ և ահա
այդ ազատ խօսքը եկաւ բանալու վերքեր ան-
թիւ, անհամար, որոնք տարիների, տասնեակ
տարիների ընթացքում կուտակվելով, փուռ-
ներ էին առաջացրել վիթխարի Ռուսաստանի
ներքին կեանքի մէջ:

Այդպիսի մի շարք վերքերի մասին կը փո-
ձենք խօսել մենք պարբերաբար, այս անգամ
կանգ առնելով թիւրքահայ փախստականների
հարցի վրա, որը շուրջիս Կովկասի աղմուկա-
տրացիայի վերաբերումներ, մի վերք բացեց
Կովկասի հայ ժողովրդի սրտի մէջ:

1895—97 թվերը մի սոսկալի շրջան էր
թիւրքահայի համար: Այդ դժբաղդ ճակատա-
դրական երկիրը մի անգամ էր տակն ու վրա
եղաւ. սուրն ու հուրը եկան ոճիւրների վրա
ոճիւրներ աւելացնելու և այդ սոսկալի սպա-
նդանոցից քրիստոնէայ հայը հազիւ կեանքը
ազատած, աւանդական հոսանքի ընդմուշոյով,
երեսը դարձրեց դէպի Ռուսաստան, նրա սահ-
մաններում ապրող իւր եղբայրների մօտ պա-
շտածանք գտնելու: Միջոց չհրից փախածին
հր մարդը, որ ժողովրդի, որ կառավարու-
թիւնը մի անկէն չէր տալ շունչ առնելու:
Թիւրքահայ փախստականը ստացաւ մի ան-
կէն, բայց այդ անկէնը այնքան կարճ միջո-
ցով և վերջում էլ այնքան նեղ, այնքան ճնշ-
ող, որ յաճախ յիշեցնում էր նրա կրած ծանր
շատ ծանր օրերը: Գաղթականների մեծ մա-
սը, որոնց թիւը տասնեակ հազարների է
հասնում, համարեալ բռնի ընդունեց ռուսա-
հայտակութիւն, սակայն որը կրելով հա-
տակի պարտականութիւնը տուրքերի և զին-
ւորական ծառայութեան նկատմամբ, զրկվեց
սեփականութիւն ունենալու իրաւունքից քսան
տարով: Նրանցից մի մասն վերաբերմամբ,
որը իրր թէ ոչ հպատակ, անցեալ 1904 թվի
վերջերին եղած կարգադրութեան հիման վրա,
որովից գաղթեցնել կամ աւելի ճիշդն ար-
տայայտած, արտքի Ռուսաստանի խորքերը,
մի որոշ թիւ էլ նրանցից այժմ դեգերում են
բանտերում ինչ ինչ անհիմն կասկածների
պատճառով: Մի քանի տարի առաջ կովկա-
սեան կառավարչապետի—Գոլիցինի թոյլտու-
թեամբ երկիր վերադարձող և աղքատ ու
քաղցած փախստական որբերի և այրիների
օգտին հանգանակած տասնեակ հազարները
մինչև այժմ էլ մնացին անյայտութեան մէջ:
Եթէ Կովկասի հայ ժողովուրդը արեւ մի աղ-
պիսի խոշոր ու իշխանութիւն, այդ միայն

իր քաղցած, թշուառ եղբայրակիցների համար
և ոչ թէ այս կամ այն կանցիլիարիստների
կամ նոյն իսկ ըտրովի կողմնակի, մասնա-
ւոր պէտքերի համար:

Թիւրքահայ փախստականների հարցը այ-
սօր էլ գոյութիւն ունի. նա իր արդար ըտր-
ովի, իր խղճով և թշուառ ու տնաւեր վիճա-
կով այժմ էլ ցցվել է մեր խղճի առաջ և օգ-
նութիւն է հայցում. մենք պարտաւոր ենք
թիւրքահային նաև նրանց գործիւնը:

Կովկասը շուտով բաղդ է ունենալու ընդու-
նի նոր նշանակված փոխարքային, մի մարդ,
որը գալիս է Կովկասը խաղաղացնելու, որը
գալիս է կովկասեան ժողովուրդների վերքերը
բուժելու, նրանց կարեւրները որոշ չափով թե-
թեւացնելու ծրագրով:

Ռուսահայտակութիւն ընդունած թիւրքա-
հայ փախստականներին տալ սեփականութիւն
ունենալու և քաղաքացիական իրաւունք, փո-
խել նրանց Ռուսաստանի խորքերը արտքիւր
կարգադրութիւնը, բանտերից ազատել այդ
թշուառներին, աշխատել նրանց նորից իրանց
հայրենիքը վերադարձնել և վերջապէս այն
զուսմանները, որոնք հաւաքվեցին այդ փա-
խստական. չքաւորների օգտին, գործադրել
իր բուն նպատակին:

Ահա այս հարցը պիտի մտցնել այն մի
շարք հարցերի մէջ, որոնք հայ ժողովրդի
կողմից ներկայացվելու են Կովկասի փոխար-
քային—կոմս Վարանցով Դաշկովին—նրա թիֆ-
լիս ժամանելիս:

Այս հարցը մեզ հայրենա համար շատ էա-
կան հարց է: Նա շուրջիւրում էր մի երկու
օր առաջ մի ժողովում, ուր մշակվում
էր հայ ժողովրդի կարեւրներ և պահանջների
պետեցիտան:

Ա.—Դօ

Երևան

ՊԻՏԻ ԱԶԱԿՑՆԵՐ

Մենք, հայերս, մեր անցեալ կեանքի ու-
սումնասիրութեան գործում, մի դարձանալի,
չփոքեցնող անփութութեան օրինակ ենք
տուել: Մենք չենք ճանաչում մեր իսկական
պատմութիւնը, որովհետեւ այն ինչ որ մեզ
ներկայացնում են իբրև մեր նախահայրերի
գործունէութեան պատկեր, առասպելներ, կեղծ,
դիտաւորեալ կեղծիքների, նախապա-
շարված հասկացողութիւնների: մի կոյտ է:
Քննական ոգին, գիտական մէթօդը չէ բերած,
մաքրած, գտած այդ կոյտը: Միայն Մ. Գա-
րագաշեանն է լծուել մի այդպիսի գործի, որը
բնականաբար իբրև նախափորձ, հեռու է կա-
տարծունէութեան: Մենք չենք ճանաչում մեր
հին մատենագրութիւնը, որովհետեւ մեր իմա-
ցական ու գրական կեանքի արտայայտու-
թիւնները չեն վերլուծված, ընկած, ըննա-
դատված և իւրեք բուն արժէքի և կարեւ-
րութեան մէջ երևան հանված: Մենք չենք ճա-
նաչում մեր գեղարուեստը, որովհետեւ այն
հազուադէպ յիշատակարանների, որոնք ի-
րանց մէջ խտացնում են մեր ցեղի գեղեցկու-
թեան ըմբռնումը, չեն ուսումնասիրված, չեն
լուսարանված:

Մի խօսքով մեր ամբողջ անցեալ կեանքը
մի փակ, առեղծմածային գիրք է, որը բանալ
կարգալու ոչ մտահոգութիւնն ունեցել ենք և
ոչ կարողութիւնը: Ու այս պայմաններում,
ապրել ենք մենք անհնական ու տարօրինակ
կեանքով այն տուններ, որ իր արմատից
կտրված սնվում է մակաբուծութեամբ, պա-
րագիտ կենցաղավարութեամբ: Եւ ինչպէս կայ
այսպիսիված տունը, մեր ժողովուրդը ինչ
մուտ է, հողի վրա, ամենապայտաստված ու ա-
մենահարկաւոր ցեղերից մէկը... Եթէ գնա-
մի շարք մարդկանց հարցնէք, հայ ազգը կը
հոգակեն ընտրելագոյն ցեղը, որի նախահայրը
եղել է Աղաւ, և որի լեզուով խօսել է ինքը
Աստուած: Այո, ոչ պակաս: Իսկ մի ուրիշ
դասակարգ, նոյնքան իմաստակ ու նոյնքան
թիւթամիտ, իր ցեղի վրա նայում է շատ
բարձրից, մտաւորապէս, բարոյապէս ու ֆի-

զիկապէս իբրև ամենախղճալի ժողովուրդնե-
րից մէկը վրա:

Երկու ծայրայեղութիւնների մէջ:

Ճշմարտութիւնը այն է, որ վերև գծված
երկու պատկերներից ոչ մէկի և ոչ միւսի մէջ
ցոյանում է մեր ցեղի հարազատ դէմքը: Ինչ-
պէս մի ժողովուրդ, որ իր ծաղկումը անցեալ
միութեան մէջ է շփոթում, բնական է որ
մենք ունենանք և՛ մեր պարծանքի, և՛ մեր
ամօթանքի առարկաները, և՛ մեր լաւ և մեր
վատ կողմերը:

Էական է որ մենք մեր մասին կազմենք
խիստ, անաչառ բնութիւն, որ մենք նստենք
արդար դատաստանի: Քննութեան տարբեր
կան, դատաւարութեան փաստաթղթերը պատ-
րաստ են:

Պակասում են դատաւորները:

Ձեռնհաս, անաչառ, անձնուէր դատաւոր-
ները:

Միթէ մենք այնքան անպարտաճանաչ
պիտի լինենք, որ այդ դատաւորի բարի կա-
մեցողութեամբ զինված հաղուադիւտ անձե-
րին չաջակցենք իրանց բեղուն և դժուարին
ճիգի մէջ:

Ես ուզում եմ անհարկել այն գրքի մասին,
որ պ. Լէօ մտադիր է նուիրել մեր հնութեան
ամենաքննող և ամենակարեւոր յիշատակա-
րան, Անիին:

Նա անկարող է իր սեփական միջոցներով
հրապարակ հանել մի այդպիսի բազմածախս,
բազմաթիւ գունաւոր պատկերներով զարդա-
րված հատոր: Հետեւաբար նա դիմում է մեր
հասարակութեան, ամենքիս:

Նա խոշոր գունաւորներ չէ պահանջում:

Միայն հինգ բուլբուլ:

Կը տեսնենք թէ հայերը մը աստիճան ըն-
դունակ են օգտակարն ու գեղեցիկը քաջալե-
րելու:

Շուտով կը տեսնենք...

Տ. Զաւէն

ԹԱՏՐՈՆ ՆԻ ԵՐԱԺՏՈՒԹԻՒՆ

(Եւրոպական դրամատիկական ներկայացումները. «Գի-
շեր» և «Կեանքի պար» պիեսները)

Հինգշաբթի, ապրիլի 21-ին, Եւրոպական
խումբը ներկայացրեց «Գիշեր» և «Կեանքի
պարը» պիեսները:

«Գիշերը» երկու գործողութիւնից բաղկա-
ցած հոգեբանական մի ուսումնած է, որ ունի
պայմանական արժանաւորութիւն: Նա բողոք
է մենամարտի կամ դուէլի դէմ և ձգտում է
ապացուցանել, որ կեանքը աւելի բարձր է,
քան սխալ հասկացված պատել պաշտպանու-
թիւնը դուէլի միջոցով: Գործող անձեր շատ
քիչ են, ընդամենը երեք, որոնցից մէկը երկ-
րորդական է և միայն մի պաշտօն, ունի այն
է յիշեցնելու հասարակական աւանդական կա-
րիքի պահանջները մասին: Եւրոպական և
Բելգորոսկիյ, որոնք կատարում էին զիւսաւոր
դերերը, առիթներ ունեին հանդէս բերելու հո-
գեբանական դերերի բազմաթիւ արտայայ-
տութիւն. սէրը խոսնված նախապաշտպանու-
նների պահանջների, պարտականութեան ցու-
ցումների, կեանքի հրապոյրի հետ հանդէս է
հանում յուզմունքների մի ճոխ պատկեր, որ-
տեղ դերասանը կարողութիւն ունի տաղանդ
ցոյց տալու և տպաւորութիւն գործելու: Պիեսը
կրում է մասունք միմիջեքեք երկաթիւրու-
թիւնների կնիք իր վրա: Պիեսը թարգմանված
է լեհերէնից Պիերշիլսկու առաջաբանով: Հեղե-
նակն է Վալդի Գրուզինսկիյ:

«Կեանքի պար» մասին մենք անցեալ տարե-
տուել ենք տեղեկութիւն: Նա, ինչպէս յայտնի
է, պատկանում է իշխան Բարեաթինսկու գրք-
չին և հանդէս է բերում մայրաքաղաքի ժամա-
նակակից կեանքի ընտրող շնորհ մէկը: Հասա-
րակութիւնը մեծ հետաքրքրութեամբ հետևում
էր պիեսի ընթացքին և դերակատարների խա-
ղին: Թատրոնը ծայրէ ծայր լիքն էր:

Օրբող

Արևելեան լեզուները Լազարեան ճեմարանից մեզ ուղարկել են Սարգիս արքեպիսկոպոս Հասան-Ջալալեանի գումարի հետևելու հաշիւը:—Մուտք. մինչև 1904 թ. յունվարի 1-ը մնում էր 92,250 ռ., 1904 թ. ընթացքում մուտք է եղել 2,900 ռ., գումար՝ 95,150 ռ. առձեռն փող եղել է 34 ռ. 88 կ. 1904-ին մուտք ստացվել է 3664 ռ. 35 կ., գումար՝ 3699 ռ. 23 կ.: Մարտ. ձեռք բերած 10 թղթերի համար վճարված է 2704 ռ. 81 կ. և 1903 թ. գումարի մասին հաշիւ տպագրելու համար 15 ռ. 60 կ., ընդամենը 2720 ռ. 41 կ.: Մինչև 1905 թ. յունվարի 1-ը կայ 95150 ռ. Գումարը գտնվում է Մոսկվայի նահանգական գանձարանում և պէտք է աճէ 1883 թ. սկսած 125 տարվայ ընթացքում մինչև 12 միլիոն գումարին հասնելը, ապա կը գործադրվի կտակողի անուշով դպրոցներ և թղթակներ հիմնելու:

Ջերբայէլ գաւառի ԱՌԱՖԵԼ գիւղից մեզ գրում են. «Ամսի 13-ին խանձածոր գիւղի հանգում, Դիզախայտ սարի լանջում, օր ցերեկով երկու թուրք մթերավաճառներ են թարկվում են մի խումբ զինված չարագործների յարձակման: Դիմադրութեան ժամանակ թուրքերից մէկը չարաչար կերպով սպանվում է, իսկ միւսին, ծանր վէրք ստացած ճակատից, աշողվում է ատրճանակի երկու հարուածով վերաւորել չարագործներից մէկին ու փախել, հաւար կանչել: Օգնութեան եկած հայ գիւղացիներին չէ աշողվում գտնել չարագործներին, որոնք առնելով վերաւոր ընկերին, արդէն անհետացած են լինում: Հայերը տանում են սպանված թուրքի դիակը և վերաւոր թուրքին նրանց գիւղը: Դէպքը հայի հանգում պատահած լինելով, թուրքերը կասկածում են հայերի վրա, սակայն, բարեբաղդաբար, կենդանի մնացած թուրքը ստում է, որ յարձակվողները նոյնպէս թուրքեր են և գիւղ: Այդպիսով թուրքավայրէջներին վերջ է տրվում:»

ՄԵՂՐԻՆԻՑ մեզ գրում են. «Մարտի 7-ին, ա. Աստուածածնի Աւետման տօնի օրը պատարագից յետոյ հոգեհանգիստ կատարվեց հանգուցեալ Բրիտանիոյ Միքայէլեանի յիշատակին: Եկեղեցում զգալի բազմութիւն կար: Պատգեց Բրիտանիոյ կենսագրութեան և գործունէութեան մասին:»

ԲԱՐԱՆԱ գիւղից մեզ գրում են. «Մեզնում վաղուց գարունը սկսվել է, սկսվել է և գարնանացանը, բայց գիւղացին բաւականաչափ վարելահող չունենալու պատճառով զրկվում է այն առատ բերքից, որը խոստանում է աշնանացանը, եթէ ազատ մնայ բնութեան այլ և այլ պատուհասներից: Տեղիս հայերի և թուրքերի յարաբերութիւնը լաւ է. իբրև փաստ կարող է ծառայել այն դէպքը, որ առիդ ունեցաւ ապրիլի 2-ին Բարանայում, ուր թողել իրանց գործը և ժողովվել էին հարեան գիւղերից բաւական թուրքեր: պատելու իրանց ներկայութեամբ վերոյիշեալ գիւղի աջը ընկնող երիտասարդ Միկայէլ Մամեանի թաղուժը: Միկայէլ Մամեանը յայտնի էր իր վերին ստիճանի աղնու և հեղ բնաւորութեամբ. նա վայելում էր ամենի համակրութիւնը. գործով վաճառական էր և խիստ հակառակ այն «չարէի» մանրավաճառներին, որոնք ամեն ներքիւ և աննրբի միջոցներով աշխատում են խաբել և գշել մի քանի «չարէի» խեղճ և միամիտ գիւղացիներ: Նա թաւաճեց ծաղիկ հասակում (28 տարեկան), թողնելով երիտասարդ կին և 3 որդ գաւառից:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

Ռուսական եկեղեցւոյ Բերլինից «ԲԵՐՏ» թագրին հետագրում են. «Ռուսական էսկադրան, այստեղի տեղեկութիւնները համեմատ, ղնում է հիւսիսային ուղղութեամբ: Տեղական ծովագնացները հազարի մեծամասնութիւնը կարծում է, որ վճռական կռիւլ երկար չի սպասեցնել տայ իրան: Ի հարկէ, եսպոնացիները չեն հեռանայ իրանց յենակէտից, ասում էր թղթակցին մի գերմանական փոխծովապետ, —այդ պատճառով կռիւ սկսելը ամբողջապէս ծովաւ: Ի Բոֆնտովէնսկոյ ձեռքին է համարանեան ծովախորշի մօտ, դէպի հիւսիս, երկացին բազմաթիւ ջնկանքի և մանր նաւեր: Անկասկած, նրանց մէջ գտնվում էին շատ եսպոնացիներ: Տօկիօից հեռագրում

են, որ եսպոնացիները, բանակի մէջ պաշարների պակասութեան առաջն առնելու համար Բոֆնտովէնսկոյ աղբորթեան դէպքում, ամեն միջոցներ գործ են դնում, որպէս զի այժմ և եթ փոխադրեն անագին քանակութեամբ պաշարներ: Կօրէյայից արդէն մի քանի շաբաթ շարունակ օժանդակ զօրքեր են ուղարկվում Օյամայի բանակի համար, այդ պատճառով կարծում են, որ եսպոնացիները շուտով նորից արշաւանք կը սկսեն: (Т.И.Ф.):

Ռուսաց բանակի կառավար: Պատերազմական ռեմից ստացված մասնաւոր տեղեկութիւնները համեմատ, ռուսական բանակը վերջին ճակատամարտի ամբողջ ընթացքում, փետրվարի 15-ից մինչև 26-ը, կորցրեց 144 հազար մարդ սպանված, վերաւորված, գերի տարված և կորած: Եսպոնացիները գրաւեցին 120 պաշարող և 68 դաշտային թնդանօթներ, 15 միլիոն հրացանային փամփուշտներ, 40 հազար հրացան, մի կորպուսային և մէկ էլ գիւղիկայի սայլախմբի և մթերքների, ֆուրաժի և զանազան գոյքի անագին պաշարներ: Մթերքների կորուստը մասնաւոր զգալի է: Ներկայումս բանակի ետեւիկողմի դրութիւնը միակերպական չէ. պաշարները Մանջուրիայում սպառված են. մենք կերպիւր երկու բերք. ցորեն ամենին չը կայ, գարին 4 ռ. արժէ պուզը. յարդ չը կայ նոյնպէս, որ առաջ ոչ մի գին չունէր, իսկ այժմ արժէ 1 ռ. 60 կոպէկ: Վաղիվայում ուստիսի պաշարներ չը կան և ուրիշ տեղից էլ բերել չէ կարելի. մի և նոյն դրութիւնն է Ամուրի վրա և Զաբայկալում, Իրկուտսկում սե փոսած ալիւրը ծախվում է պուզը 4 ռ. 40 կոպէկով: Ամբողջ Միբերը հացի կարոտութիւն ունի: (СЫНЬ ОТЕЦ.):

—Պարիզից «СЛОВО»-ին հեռագրում են. «Ծովային գործի տեղական մասնագէտները շատ աշող են համարում ծովապետ Բոֆնտովէնսկոյ կանգնելու համար ընտրած տեղը, Պաշարան հրուանդանի դիմացը: Էսկադրան կատարեալ հարաւորութիւն ունի հակելու այն բոլոր առևտրական նաւերի վրա, որոնք գալիս են Եւրոպայից չինական նաւահանգիստները և սովորաբար բերում են գինւորական կոնտրաբանդաներ: Փոթորիկի դէպքում ռուսական էսկադրայի նաւերը շատ հեշտ կարող են ծածկվել ակի մօտ: (Т.И.Ф.):

—Վախճանվեց ռուսական Բոֆնտովէնսկոյ էսկադրայի հետ գնացած գլխաւորական էկիպաժի լէյտենանտ իշխան Բ. Մ. Կանտալովսկին—կոմս Սպլենսկի, ապրիլի 13-ին «Գաւառագ» շոգենաւի վրա. Կօրմբօի մօտ թաղվեց նա ծովի մէջ: (Р.У.С.):

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Անգլիա: Նորիս հրատարակվեց Սպիտակ գիրքը, որի մէջ պատմվում է սամանագրութեան նախագիծը Տրանսվալի համար: Այդ նախագիծը ընդարձակում է օրէնսդրական ժողովը, որ հիմնված է Տրանսվալում 11/2 տարի առաջ: Կառավարութիւնը այն կարծիք է, որ պարամենտական ինքնավարութիւնը մարզու ձևով կուսակցութիւնների կռիւ կառավարեցնէր ցեղական աստառի տակ: Երբ բօքները և անգլիացիները մի առժամանակ կողք կողքի կը գործեն, այն ժամանակ կը պարզվի, թէ ի՞նչ ձևով պէտք է պարամենտական ինքնավարութիւն տրվի կօլոնիային: Առ այժմ բօքները գտնվում են դեռ իրանց հանրապետութեան անկման խաւի թրմ արագորութեան տակ, բայց բերտանական կառավարութիւնը յոյս ունի, որ բօքները շուտով կը հաշտվեն անգլիացիների հետ և կը դառնան համաշխարհային կայսրութեան նեցուկներից մէկը:

«ՄՇԱԿԻ» ՀՅՈՒՄՈՐԻՏՏԵՐԸ

ՌՈՒՄԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԵՐԸ
17 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Գինեղալ Լինկվիչի ամենահայտնակ հեռագիրը Նորին Կայսերական Մեծութեան Անունով ապրիլի 20-ից. «Ապրիլի 18-ին կազմակերպի մի խումբ պօզիստու ժեյնգուիլ առաջնորդութեամբ յանկարծ յայտնագործեց մի եսպոնական էսկադրոն և յարձակում գործեց: Եսպոնական մի օֆիցէր և մի քանի զորագուն կտոր-կտոր արվեցին: 11 զինուոր գերի են առնված:»

ՏՕԿԻՕ: Հաղորդում են, որ միկադոն և իր կինը, թիթեկ տկարութեան պատճառով, չեն կարող ներկայ լինել պատերազմում ընկած 30,000 զինուորների դէֆիլիացիայի կամ անմարացման հանդէսին:—Եսպոնական ծովում դեռ թանձր մառախուղ է:—Վերջնականապէս հաստատված է, որ բալտիական էսկադրան

ապրիլի 19-ին գտնվում է Դէյտա նաւահանգիստի մօտ Խանկոնսեան խորշի հիւսիսային մասում:

ՄԷԼԲՈՒՐՆ: Ժողովուրդը չափազանց հետաքրքրվում է Մակեդոնիայի դէպքերով: Լրագիրները հրատարակեցին Զագորիչանում յոյների արած արիւնհեղութեան և թիւրք կառավարութեան բռնած դերքի դէմ Բօլգարիայում կատարված բազմաթիւ միտինգները և նրանց որոշումները: Թիւրքիայից եկած վերջին լուրերն էլ հանգստացուցիչ բնույթ ունենում են, որպէս զի խաղաղացիներ ժողովրդի յուզված մտքերը: Ապրիլի 13-ին թիւրք զինուորները յարձակվեցին յունական Դաւաբիս և Բօլգարական Յէր գիւղերի վրա Դէմիւրիսարի մօտ, Կրուշիվի շրջանում և հրդեհեցին նրանց: Ամօթի սկզբում բօլգար գիւղացիները, որ խմբով դիմում էին Յունաստան գործ որոնելու, սպանեցին և վերաւորեցին մի քանի սերբերի, որոնք Կոնստանդուպոլիսում եռանդուն պրօպագանդ էին անում բօլգարական տարրի դէմ:

ՍԱՐԱՏՕՎ: Հնաւանդների բոլոր աղօթատներում գոհարանական մաղթանքներ կատարվեցին դաւանութեան ազատութիւն տրվելու առիթով:

ՀՈՒՄ, 21 ապրիլի: Հինգշաբթի կայանալու է միջազգային կօնֆէրենցիայի նիստը, որի նպատակը լինելու է կրթական հարցի լուծումը:

ԿԱՆԵԱ, 20 ապրիլի: «Դէյլի Մէյն» ստացել է հետեւեալ հեռագիրը. «Կրէտական ժողովուրդը, իր ամենասուրբ զգացմունքները վերաւորված զգալով նրանով, որ յունական դրօշակը վայր առան միջազգային դօրքերը, հանդիսաւորապէս դիմում է եւրօպական ազատամիտ ազգերին և մամուլին, թախանձելով նրանց միջնորդել մեծ պետութիւններին իրանց ջաղաքական օրինաւոր ձգտումները իրագործելու օգտին»:

ՏՕԿԻՕ, 21 ապրիլի: Պատերազմում գտնվածների պատւին ազգային տօները կը շարունակվեն մինչև ապրիլի 22-ի երեկոն: Միկադոն և կայսրուհու ներկայացուցիչները նշանակված են պրինց Փուշկինի և պրինց Կոնստանտինի: Եսպոնիայի բոլոր ծայրերից հաւաքված մարդիկ առաւօտվանից լըցրել են Տօկիօն:—Մամուլը սկէպտիքաբար է վերաբերվում դէպի Ֆրանսիական կառավարութեան հաւաստիացումները չէզոքութեան վերաբերութեամբ: Լրագիրները յայտնում են, որ չափաւոր յանդիմանութիւնները չեն ազդի Ֆրանսիայի վրա և այդ պատճառով ինդուրում են եսպոնական կառավարութեանը աւելի անկախ դերը բռնել: Նրանք յիշեցնում են, որ Անգլիան Նապօլէօնի դէմ վարած պատերազմի ընթացքում շատ տեղեր գրաւել էր, իսկ 1875-ին Գերմանիան սպառնում էր գրաւել Բէլգիան:

ԿԱՆԵԱ, 20 ապրիլի: Երէկվայ ժողովից յետոյ ազգային կօմիտէտի անդամները մեծամասնութիւնը վճռեց օգնել ապստամբներին հանելու Յունաստանի հետ միացման:

ՄՕՍԿՎԱ, 21 ապրիլի: Մօսկվայով անցկացաւ գերմանական սանիտարական խումբը գիթութեան 10 քուրբից բաղկացած, պրինց Եսա Ռէյսի ղեկավարութեամբ:

22 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Կովկասի Փոխարքայ կոմս Վօրոնցով-Դաշկովը Պետերբուրգից կը մեկնի ապրիլի 23-ին. մի քանի օր նա կը մնայ Օրշանսկի գաւառի իր կալուածում: Թիֆլիս կը ժամանի մայիսի 5-ին:

ՄԻՆԱՎԱ, 21 ապրիլի: Բալտիական գերմանական շրջաններում չափազանց եռանդով խօսում են կրօնական համերաւարտութեան մասին, որ շօշափել է բալտիական կեանքի մի քանի շատ կարևոր հարցերը: ՄԻՆԳԱՊՈՐ, 21 ապրիլի: Նեբօգաստովի էսկադրան նկատվել է Մալակայի նեղուցում: Ժողովրդի մօտ և պէտք է Մինգապուր համար կէս գիշերի մօտ: Էսկադրան բաղկացած է 4 զրահակիր նաւերից, 2 կրէյսէրից, 4 ածխատարներից և մի լողացող հիւանդանոցից:

ՄՄՕՑ, 21 ապրիլի: Ենթադրում են, որ բալտիական էսկադրան խոշոր միասնի կրից տայֆոնից կամ իրթնութեան չինական հարաւային ափերի մօտ: Այս շաբաթ էսկադրան մի քանի անաշող փորձեր արեց որոշելու եսպոնական նաւատորմի տեղը:

ՊԱՐԻՉ, 21 ապրիլի: Թիւրք կառավարութիւնը յոյս ունի ռուսական նաւեր բերհիւ Արաբիա օժանդակ զօրք հասցնելու համար:—Ֆրանսիական 3 նաւ, որ մինչև այժմ Սալգոնից ուստիլէ էին կրում բալտիական էսկադրան

րայի համար, յանկարծ հրաման ստացան ընդհատել այդ բանը:

ՀՈՒՄ, 21 ապրիլի: Պաշտպան պետութիւնները արքայորդի Գէօրգիին ուղարկեցին մի յայտագիր և յայտարարեցին, որ եթէ նա անյապաղ հանգստութիւն չի մտցնի Կրէտեում, նրանք կը համարեն արքայորդու կօմիսարական պաշտօնն աւելորդ:

22 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Անուանական Բարձրագոյն ուկազ Կառավարիչ Սէնատին. «Մեր Անուանական ուկազներով, տրված Կառավարիչ Սէնատին և զինուորական մինիստրին 1905 թիւ փետրվարի 7-ին, Մենք անհրաժեշտ համարեցինք զինուորական վիճակի մէջ յայտարարել սամարօ-դաւոսուստեան և սերբիական երկաթուղիները, այդ ուկազներում բացատրված հիմքերով: Իբր զարգացում այդ բանի, սերբիական երկաթուղու վրա գնացքների կանօնաւոր երթեկեկութեան համար այժմ հրամայում ենք. 1) զինուորական վիճակում հրատարակել անժէքեան և սուսէնեան քարհանքերը, որ գտնվում են Տօմսկի նահանգում և կպած են սերբիական դէմ հողաշերտին: 2) Միբերեան զինուորական շրջանի դօրքերը հրամանատարին պարտաւորեցնել յիշված տեղերում ապահովել պետական կարգը, տալով յիշված անձին բանակի հրամանատարի իրաւունք այդ առիթով: Իսկականի վրա Նորին Կայսերական Մեծութեան Սեփական ձեռքով ստորագրված է. «ՆԻԿՈԼԱ»: Ցարսկօէ-Սէլօ, 13 ապրիլի 1905 թիւ:

Ապրիլի 19-ին Ռազաւոր Կայսրը և Թագուհի Կայսրուհիները՝ Մարիա Ֆէօդօրօվնա և Ալեքսանդրա Ֆէօդօրօվնա, Մեծ Իշխանուհի Օլգա Նիկօլայնան և Մարիա Պաւլօվնա Մեծ Իշխան Դաւիթի Պաւլովիչը այցելեցին Թագուհի Կայսրուհի Ալեքսանդրա Ֆէօդօրօվնայի անձնակալին հաշուով կառուցված Նորին Մեծութեան հիւանդանոցը հիւանդ և վերաւոր մարտնչողներին համար. Թագուհի Կայսրուհիները բարեհաճեցին հիւանդ և վերաւոր օֆիցէրներին յանձնել զատկական ձուեր: Վերաւորներին նայելու ժամանակ Նոցա Մեծութեանը արժանացրին նրանց Իրանց հարցերին: Թագաւոր Կայսրը բարեհաճեց 5 հոգի հիւանդներին զինուորական շքանշաններով վարձատրել:

ՊԱՐԻՉ, Եսպոնական դեսպանութիւնը յայտնեց, որ Դէյկաւէի կողմից նոր կարգաւորութիւններ սկսել չեն ունեցել չէզոքութեան մասին:—Էդուարդ Թագաւորը ժամը 3-ին ժամանեց Կալէ և կրէյսէր նստեց Լօնդօն գնալու համար:

ՄԱՐԻՆԻ, Վիլլավէրդէ մինիստրը կուղեկցեց Թագաւորին Պարիզ և Լօնդօն:

ԲՈՒԷՆՕՍ-ԱՅՐԵՍ: «Եյլի Մէյլի» թղթակիցը խօսակցութիւն է ունեցել արտաքին գործերի մինիստրի հետ, որը հաւաստիացրել է, որ Ռուսաստանի արգէնախնեան մարտանաւերի գնման լուրերը սոսում են:

ՀՈՆԳԿՈՆԳ: Հայֆօնից մի հեռագիր հաստատում է, որ ծովապետ Դալլը միացել է Ֆրանսիական էսկադրային Արօնի ծոցում:

ԶԻԿԱԳՕ: Գործադուլի պատճառով՝ կուսակէրական առաջին գունդն սպասում է հրամանի բազմա մտնելու:

ՊԱՐԻՉ: Թուրքերի մօտ և Նմէն ուղարկել 100,000-նոց մի բանակ՝ ապստամբութիւնը զսպելու:—Էդուարդ Թագաւորը խօսակցեց հանրապետութեան նախագահի և արտաքին գործերի մինիստրի հետ և լրջօրէն քննադատեց ռուս-եսպոնական պատերազմը և նրա ազդեցութիւնը Մարօկկօի գործերի վրա: Լօնդօն հանելով, Թագաւորն այնպապաղ ցանկացաւ տեսնել Բալթիկին:

ԼՕՆԴՕՆ: Էդուարդ Թագաւորը Լօնդօն ժամանեց երեկոյեան ժամ 6-ին. կայսրանում նրան զիմաւորեցին լաւալին մինիստր Բալթիկը, արտաքին գործերի մինիստր Լանսդօնը և ներքին գործերի մինիստրը: Ընդհանուր կարծիքով՝ Թագաւորը եռանդով կաշխատի վերջ տալ Մարօկկօի հարցի դժուարութիւններին:

ՏՕԿԻՕ: Մի մարդ, որ իրան անգլիացի էր անուանում, փորձեց կաշառել Շանգհայում չինական պաշտօնական իշխանութեանը, որ նա թոյլատրէ բերել ռուսական զինաթիւ արված «Ասկօլ» կրէյսէրի մեքենայների մի մասը, առաջարկելով 150,000 ֆունտ-ստէրլինգ: Գերմանական մի նաւապետ առաջարկում էր իր ծառայութիւնը նաւը նաւահանգստից դուրս հանելու 50,000 ֆունտ ստէրլինգով: Դաւադրութիւնը բացվեց: Ներկայումս բերդի թնդանօթներն ուղղված են դէպի Վուլանի մուտքը:

